ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-21/2-8

ք.Երևան «22» « 01 » 2021թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ Արտակ Ղազարյանի, որը գործում է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ՈՍԿԵ ԱԳԱ» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն՝ Արմեն Թադևոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 29.12.2020թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-21/2-8 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 8.5 և 8.15 կետը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. *Համաձայնագրի առարկան*

1.1 Համաձայն ՀՀ կառավարության 30.12.2020թ.-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N2215-Ն որոշման հավելված 10-ի՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության գնումների պլանով՝ «Օճառ, ձեռքի» ապրանքատեսակը նախատեսված է ձեռքբերել 1000 կգ քանակով:

1.2 Հիմք ընդունելով՝ ՀՀ կառավարության 30.12.2020թ.-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N2215-Ն որոշումն ուժի մեջ մտնելու փաստը, ուժի մեջ է մտել 09.01.2021թ.-ին, կողմերը որոշեցին՝ հաստատել Պայմանագրի N2 հավելվածը՝ «Վճարման ժամանակացույց»-ը, նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N1-ի:

1.3 Վաճառողը Գնորդին է մատակարարում «Օճառ, ձեռքի» ապրանքատեսակը՝ 1000 կգ քանակով, համաձայն Պայմանագրի գնման ժամանակացույցի, իսկ Պայմանագրով նախատեսված «Օճառ, ձեռքի» ապրանքատեսակի մնացած 1000 կգ քանակի մատակարարման վերաբերյալ «Վճարման ժամանակացույց»-ը կհաստատվի վերջինիս համար ֆինանսական միջոցների նախատեսման դեպքում:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-21/2-8 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը և իր N1 հավելվածը կազմված են 2 էջից՝ հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, համաձայնագրի N1 հավելվածը, համարվում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն | «ՈՍԿԵ ԱԳԱ» ՍՊԸ |
| ք. Երևան, Արշակունյաց-63 | ՀՀ, ք. Երևան, Հանրապետության 61 |
| ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Արարատ բանկ» ԲԲԸ |
| Հ/Հ 900011175016 | Հ/Հ 1510028723080100 |
| ՀՎՀՀ 02204739 | ՀՎՀՀ 01237057 |
| ՔԿ ծառայություն՝ | Տնօրեն՝ |
| Ա.Ղազարյան | Ա. Թադևոսյան |
| (ստորագրություն) | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված N 1*
*«22» « 01 » 2021 թ. կնքված N 1 Համաձայնագրի*
*N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-21/2-8 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում՝ | | | | |
| | | | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ | Ընդամենը |
| 10 | 39831241/501 | Օճառ ձեռքի | 0 | 0 | 370000 | 370000 | 370000 |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | 0 | 0 | 370000 | 370000 | 370000 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739

ՔԿ ծառայության պետ
Ա.Ղազարյան

(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«ՈՍԿԵ ԱԳԱ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Հանրապետության 61
«Արարատ բանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510028723080100
ՀՎՀՀ 01237057

Տնօրեն՝
Ա. Թադևոսյան

/ստորագրություն/
Կ.Տ